ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 617

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

26 հոկտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի «ԴԻԼԻՋԱՆԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ԹԻՎ 11/5 ՀԱՍՑԵԻ 200.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 539 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի փոփոխումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 5-ի «Թբիլիսյան խճուղի թիվ 11/5 հասցեի 200.0քմ հողամասը «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» թիվ 539 որոշման և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. սեպտեմբերի 5-ի «Թբիլիսյան խճուղի թիվ 11/5 հասցեի 200.0քմ հողամասը «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» թիվ 539 որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ որոշման մեջ նշված վարձակալության իրավունքը փոխարինել կառուցապատման իրավունքով և 240000 դրամ տարեկան վարձավճարի չափը փոխարինել 360000դրամ-ով: Ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշման 8-րդ հոդվածի 44 կետի փոխարեն հիմք ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման 46.2 հոդվածի "դ" ենթակետի պահանջները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 618

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

26 հոկտեմբեր 2011թ.

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 183 ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՔԱՂ. ՆԱԻՐԱ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 183 շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի 113-128 ծածկագրով հողում քաղ. Նաիրա Ասատրյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն, մասնավորապես՝ 24.0քմ մակերեսով ավտոտնակ /հաշվարկված է արտաքին չափերով/ և 24.0քմ ինքնակամ զբաղեցրած հողամասով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի պահանջներով, «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2005թ. հոկտեմբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Նաիրա Ասատրյանի կողմից ինքնակամ կառուցված շինությանը տալ նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 183/8:
2. Կալինինի փողոց թիվ 183/8 հասցեի ինքնակամ շինության նկատմամբ ճանաչել Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը:
3. Սույն որոշումը՝ կից հատակագծով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, նշված անշարժ գույքի նկատմամբ Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ